

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրություն հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1. «Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
2. «Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
3. «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Տնօրենի ընտրության (նշանակման) պարտադիր պայմաններն են՝

- 1) բարձրագույն բժշկական կրթություն և հետբուհական կրթություն ներքին հիվանդություններ (թերապիա), կամ մանկաբուժություն, կամ ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ.
- 2) առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 2 տարվա ստաժ.
- 3) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր).
- 4) կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն.
- 5) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝
 - ա. ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման,
 - բ. անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման.
 - գ. աշխատանքների բաշխման.
 - դ. կարգապահական պատասխանատվության.
 - ե. խրախուսանքի միջոցների կիրառման.
- 6) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- 7) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝
 - գույքի, ներառյալ ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու կարողություններ.
- 8) բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում.

Լրացուցիչ պայմաններն են՝

- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
- 2) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն
- 3) օտար լեզվի իմացություն

Մրցույթը կկայանա՝

1. «Մայիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ 2022թվականի ապրիլի 5-ին ժ. 11⁰⁰ -ին:
2. «Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ 2022թվականի ապրիլի 5-ին ժ. 14⁰⁰ -ին:
4. «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ 2022թվականի ապրիլի 6-ին ժ. 11⁰⁰ -ին:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Վայոց ձորի մարզպետարան են ներկայացնում՝

- 1) դիմում.
- 2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.
- 3) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.
- 4) ինքնակենսագրություն.
- 5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- 6) քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.
- 7) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).
- 8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:
9. Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9⁰⁰ -17⁰⁰ , բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2022 թվականի մարտի 1-ը.

***Մրցույթը կկայանա Վայոց ձորի մարզպետարանի շենքում (ք.Եղեգնաձոր Շահումյան 5):
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ (ք.Եղեգնաձոր Շահումյան 5, անձնակազմի կառավարման բաժին, հեռ.0281 2-55-95:***